

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մուշեղ Գալշոյանի «Մարութա սարի ամպերը»
պատմվածաշարը

Ուսուցիչ՝ Գագիկ Խաչատրյան

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	էջ 3
Գլուխ 1-ին	
«Մարութա սարի ամպերը» պատմվածաշարի ուսուցումը.....	էջ 5
Գլուխ 2-րդ	
Բնաշխարհիկ մարդկանց հոգեբանական դրաման «Մարութա սարի ամպերը » պատմվածաշարում.....	16
Ամփոփում.....	էջ 31
Օգտագործված գրականություն.....	էջ 32

Ներածություն

Գրողի առաջին ակնարկը տպագրվել էր 1959 թ. Թալինի շրջանային թերթում. վերջին գիրքը՝ հետմահու՝ 1981թ.: Երկու տասնամյակ տևած ստեղծագործական կյանքում նա շատ բան չհասցրեց անել, սակայն հասցրեց ստեղծել իր ծուխը հայ գրականության անդաստանում: Գրողի ֆիզիկական բացակայությունը չխանգարեց, որ շարունակվեն նրա ավանդույթներն ու անմահ խոսքը:

Դեռ առաջին ակնարկներում նա դիմում էր մեկ հիմնահարցի՝ երկրի բախտ ու ճակատագրին: Հարկավոր է ամրապնդել երկրի սահմանները, սատար կանգնել արցախահայությանը: Մարդու ունեցած մեծագույն արժեքը հայրենիքն է, իսկ օտար երկիրների տակ ապաստան որոնելը ոչ միայն դասալքություն է, այլև ինքնառնջնացում: Գալշոյանի ակնարկներով կարելի է քարտեզագրել այդ տարիների Հայաստանը. որտեղ ինչ է կառուցվել, ինչ նահանջ ու ինչ առաջընթաց կա, մի խոսքով՝ դա իսկական տարեգրություն էր՝ հավաստի և վստահելի: Այսպես՝ հայրենի բնաշխարհի քաջ իմացությամբ, իրական կերպարների վարպետ ուրվագծումով, առանձին օջախների տոհմագրությունն ու բնակավայրերի պատմությունը շարադրելով՝ գրողը եկավ հասավ իր գեղարվեստական աշխարհի յուրացմանն ու ինքնագիտակցմանը: Իսկ Խաչիկ Դաշտենցի վեպի մասին նրա խոսքը՝ «Բրաբիոն ծաղիկ որոնողը», պանծացնում էր հայ ազատամարտն ու ազատամարտիկներին: Գրողը գալիս էր իր նախնիների ավանդներից, հենվում նաև հայ բնաշխարհիկ ավանդույթներին, որոնք գալիս էին Հ. Թումանյանից, Հ.Մնձուրուց, Համաստեղից, Ա. Բակունցից: Այս ամենից գատ նրա թիկունքում իրական մարդիկ կային, իրական կենսագրություններ, բերնից բերան անցնող պատմություններ: Այս էր գաղտնիքը, որ կարճ միջոցում նա դարձավ մեր ժողովրդի ամենասիրելի գրողներից մեկը ոչ միայն մեզանում, այլև արտերկրում:

Մուշեղ Գալշոյանը գրողների այն սերնդից էր, որոնք կորուսյալ երկիրը պատկերացրել են կամ երևակայության մեջ, կամ էլ «տեսել» անրջային կապույտների մեջ միայն: Սակայն նա օժտված էր բացառիկ երևակայությամբ. ինչ որ պատմում էին ականատեսները, նա կարողանում էր կյանքի կոչել գեղարվեստական խոսքով: Իր բնավ չտեսած մարդկանց, միջավայրն ու դեպքերը նա նկարագրում էր այնպիսի

անմիջական ջերմությամբ ու որոշակիությամբ, այնքան կենդանի, որ, թվում է, գնացել է հայրենի երկիր, անցել տասնամյակների կյանք, թրծվել իրադարձությունների հնոցում և վերադարձել անցյալի մասունքների թանկագին բեռով, վերակառուցել այն ոչ թե կտրտված պատառիկներով, այլ համակողմանի ամբողջականությամբ:

Գլուխ Ա

«Մարութա սարի ամպերը» պատմվածաշարի ուսուցումը

«Մարութա սարի ամպերը» /1981/ աչքի է ընկնում ոչ միայն անցյալի վառ ու անմոռաց մանրամասների դրվագումով, այլև բովանդակալից ու ընդհանրացված վրձնահարվածներով: Պատմվածաշարն առաջին հայացքից թվում է տարբեր կերպարների մի պատկերասրահ: Իրականում այդ կերպարները ոչ միայն կապված են իրենց ճակատագրով, այլև ամեն մեկն իր հերթին արարում է ժողովրդի՝ պատմությունը, գործն ու ոգին: Մարդ, բնություն և հայրենիք, անհատ, պատմություն, ազատություն ու պայքար, ահա գրքի էությանն առնչվող հիմնական խնդիրները: Ուշագրավ են առանձնապես ծերունագարդ հերոսները, որոնք կարծես վաղուց ի վեր ապրում են արտաժամանակյա կյանքում: Նրանք քանդել են ժամանակների շղթան՝ հարակցելով ներկան ու անցյալը կենդանի միայնության մեջ: Այդ ծերունիների համար կարծես նույնիսկ մահ չկա: Օրինակ, Ծովասարցի Օհանը «լսում է» թուրքերի ձեռքով սպանված հոր ձայնը և պատրաստվում է մեկնել Էրզիր: Նա խոսում է մահացած կնոջ հետ.

«Պառավ, Էրզիր կերթամ,- շտապեց հայտնել, - կգարմանա՞ս...» [Մ. Գալշոյան, Մարութա սարի ամպերը, Ե., 1983, էջ 224]:

Այստեղ հիշատակենք նաև Դավոյին: Մինչ Դավոյի զենքի ընկերները մտածում են որ նա վերջապես ճանապարհվում է դեպի խաղաղ հանգրվան, այլևս «ճամփորդ» է, նրանք այն հարցին, թե ուր է գնում, հոգեվարքի մեջ պատասխանում է.

«Կռիվ կերթամ, Պչո՛ւկ, հիշելով Ցիցքարի կռիվները:[ն.տ., էջ 210]

«Մարութա սարի ամպերը» գրքի մեծ խորհուրդն ըմբռնելու իմաստով անչափ կարևոր է գիրքը բացող «Էս հին ու նոր օրեր» մուտքը, որն ըստ կառուցվածքային նշանակության ունի նախաբան-նախերգանքի բնույթ: Գերդաստանը հավաքվել է շնորհավորելու գերդաստանի նահապետի՝ հենց իր՝ Մուշեղ Գալշոյանի հոր Նոր տարին: Բայց տան հայրն ու պապը կորցրել է ժամանակի զգացողությունը, կորցրել իր տեղը կյանքում: Նա դիմում է որդուն. «Մուշե՛ղ, էս գարնան Ծովասարի արտեն ի՞նչ ցանենք: Գարի՞ ցանենք, թե՞ գլգիլ»: Հետո՝ «Մուշե՛ղ, երեկ չէ՞մեր խոփ ջարդավ:

Մենք Գալշո Մանուկի տղերքն էղնինք ու մեր գութան կանգնի՞: Էս գիշեր թե բաբոն սարից իջնի, ինչ պատասխան կտաս»: [ն.տ., էջ 157-158] Թոռներն աղմկելով պապին «հետ են բերում» իր կյանքի հեռավոր ժամանակներից՝ ասելով. «1975 թիվն է, Նոր տարի, ի՞նչ գութան, ի՞նչ խոփա»: «Հայլեե՛՜...- Հեռու հեռվից, Ծովասարի փեշի իր արտերից դարձավ, ետ եկավ հայրս: Էս հին ու նոր օրեր... Էս մամոռոտ օրեր»: [ն.տ., էջ 157-158]

Նոր ժամանակներ են, սակայն գրքի հերոս դարձած սերնդի ներկայացուցիչներից ամեն մեկի ուշքն ու միտքը անցյալի հետ է, ուր նրանց մանկության, պատանեկության և հերոսական ընդդիմության տարիներն էին: Այսպես ժամանակները տարրալուծվում են նաև հեղինակի էության մեջ, և նա էլ, միանալով իր հերոսների կյանքին, գնում է նրանց անցյալ ու ներկա օրերին ընդառաջ:

Նրա հերոսները շնչավորում են ողջ արտաշխարհը, խոսք ու զրույց բացում անցյալի, թանկագին մեռյալների, կենդանիների, բույսերի, իրերի ու անկենդան աշխարհի հետ: Նրանց շրջապատող ամեն ինչ՝ բնությունը, քարերը, անասունները, իրենց մեջ կյանք ու հոգի են կրում: Այս իմաստով ուշագրավ է «Գինարբ ծաղիկը»:

Պատմվածքի հերոս Բարսեղը, թոռան ձեռքը բռնած, գնում է Խուչերով սար և այնտեղ հանկարծ տեսնում գինարբ ծաղիկը: «Աչքերին չէր հավատում. ախր գինարբ էրգրի սարում մնաց, չգաղթեց, մնաց: Լինելու բան է... Չէր հավատում: Իսկ գինարբը խատուտիկ աչքերով ժպտում էր:

- «Քու անուն գինարբ է»: Ծաղիկը գլխով արեց: [ն.տ., էջ 262]

Ծաղիկը փնջելով՝ Բարսեղը մտածում էր «Էրգրից ծանոթ է եկել, գյուղ պիտի տանի»: Ու գյուղ է տանում, տնետուն բաժանում երկրից հիշատակ մնացած հարազատին: Բայց հետո Խուչերով արտն էլ են վարում և ավերում գինարբ ծաղկի տունը: Իսկ ծաղիկը միայն այդտեղ էր աճում: Խորհրդանշական պատկեր է սա, որ կարծես զգուշացնում է՝ մի վարեք հիշողության հովիտը, մի քանդեք հիշատակների կացարանը:

«Միայնակ ծառը» պատմվածքում Աստծո առաջ գործած մեղքի զգացողություն է ունենում Հազրոն, որ կացնահարել էր միայնակ աճած հերոսի ծառը, սպանել բնության գեղեցկությունը՝ բունը ուղիղ ու սլացիկ, սաղարթները՝ երկնքում: Ու հիմա

տենչում էր ներում, որ ձեռք է բարձրացրել իր նմանի վրա, ուրեմն ինքը մարդասպան է:

«Նա գիտեր, որ ծառը խռով է, չի անսա իր կանչին՝ չի գա և գիրկընդխառն չի մեռնի իր հետ. ծառը կպատժի Հազրոյին, կլոնչնի ոտքի վրա և կընդունի Երկրի կանչը: Երկիրը մի վերջին հրաշք երևի պահել է ծառի համար, և ծառը տապալվելիս կտեսնի: Իսկ իրեն կթողնի ոտքի վրա, այսպես՝ աշխարհից դատարկված, առանց աշխարհի, առանց հրաշքի, այսպես՝ դատարկ հայացքով, դատարկ երկնքից կախված ճոճվելու: Այսպես կպատժի ծառը»: [ն.տ., էջ 311]

Մարդու և բնության փոխհարաբերության մեկ այլ տարբերակ է «Աղորիքը»: Ցորենի շեղջը դառնում է ոչ միայն ամբողջ տարվա աշխատանքի արդյունք ու ապրուստի միջոց, այլև բնությունից ու չխաբվելու մտավախություն՝ այն զգացողությամբ, որ գոնե բնությունը իր հանդեպ բարի ու արդար կլինի մինչև վերջ, թե չէ իր նմանը՝ մարդը, կխաբի ու կխաբի...

Բնագզացողական այս նույն ոգով դաշտապահ Մոսեն խորհուրդ է տալիս նոր սերնդին, որ իմանան, բնության լեզուն, առանց որի, ինչքան էլ խելքի պաշարներ կուտակեն, կմնան թերուս: Իր դաշտապահի համար բնությունը բաց գիրք է, որը, ավաղ, այլևս «կարդացող» չկա:

Այս նույն պատմվածքում խիստ տպավորիչ է այն դրվագը, երբ Մոսեն տեսնում և ջնջում է քարի «վերքը»՝ հովվի գրած անունը:

«Հետո հրացանը ուղղեց աղբյուրի քարի փորվածքին, բայց զսպեց իրեն: Հիմա էլ ինքը պետք է վիրավորի խեղճ քարին: Եվ անունը ջնջխեց՝ քարով: Ջնջխեց, ջնջխեց, ապա մի բուռ խոնավ հող բերեց-կապեց քարի վերքը և նորից հրացանը ձեռքն առավ... : [ն.տ., էջ 329]:

«Թաթոն» պատմվածքի համանուն հերոսը եզան աչքերի մեջ տեսնում է իր մահացած հոր աչքերի արտահայտությունը. «Եզան աչքերից համառորեն նայում էր հայրը... Դու իմ հերն ես, իմ ջոջ եզ, դու իմ Հլո հերն ես»: [ն.տ., էջ 238]

Սա հենց մարդու և բնության այն օրգանական միասնությունն է, որ կազմում է ժողովրդի մարդու բնական մտածողության հարազատ տարերքը: Թաթոն հարևանից խնդրած եզների հետ անկարող է վար անել, քանի որ նրանց անունները չի իմանում, նրանց հետ «խոսել» չի կարող, իսկ լուռ աշխատել էլ չի կարող: Այդ պատճառով նա

վարատեղից հասնում է գյուղ, որ եզների անուններն իմանա և կարողանա աշխատել նրանց հետ, ինչպես մարդկային էակների, ընկերների հետ կաշխատեին:

Իր գրքում, սակայն, ամենաէականը հայրենիքի /թե ներկա և թե պատմական/ հանդեպ այրող սիրո զգացումն է, որը գրողը վիպում է էջ առ էջ, դրվագ առ դրվագ: Մեծ լարվածությամբ Գալշոյանը բացահայտում է հայրենասիրության էությունը: Նրա «անցվորների» գիտակցության ամեն մի պահը լցված է այդ էության անթիվ մարմնացումներով, որ այցի են գալիս մերթ որպես երագ, մերթ որպես շոշափելի իրականություն:

Նման մի հնարքի ենք հանդիպում «Պատրանքում»:

«Մաղթանքը Բազե Առաքելի շուրթերին կիսատ մնաց. նա գյուղահայաց լեռան լանջին, ձյունների մեջ ոչխարի հոտ նկատեց: Այ քեզ հրաշք. ձմռան կեսին, լուսելուսի հետ այս հոտը ուր է գնում: Այսպես՝ իծաշարուկ, մի մարդ ելվերող հոտի առջևից ձմռան կեսին, ձյան միջով այս հոտը ուր է բարձրանում...»: Բազե Առաքելը տրորեց աչքերը և ընթացքում գլխի ընկավ, «Աստված իմ իսելքն առել է, ախր՝ հոտ չէ, դա քանդած պատշար է... հոտ: Բազե Առաքելը ժպտաց. տեսիլքը դուր էր եկել... [ն.տ., էջ 267]: Երկար մտածելուց հետո Առաքելը հիշում է, որ նման պատկեր տեսել է երգրում: «Խոտն ու տերևը այրված էին, իսկ հոտը ձմռան տակից դուրս բերել էր պետք: Հայրը երկար չմտածեց, միակ հույսը մորեղբայրն էր, որ ամեն տարի երկու ձմռան անասնակեր էր կուտակում: Եվ առանձնացրեց ծանրած ոչխարները, նրանք, որ էսօր-էգուց ծնելու էին, զատեց հայրը, մնացածը՝ կարգին մի հոտ՝ Լուսաստղի հետ քշեցին:

Քեռու գյուղը ճակատարի թիկունքին էր, սարը կտրել էր պետք՝ քանի դեռ ձյան կեղևը պինդ էր, և արշալույսին քշեցին հոտն ու բարձրացան: Ահա» [ն.տ., էջ 268]: Բազե Առաքելը նաև Գալշոյանի յուրատեսակ նախազգացումն էր սեփական վախճանի մասին: Հերոսի՝ ադեն հավիտյան փակված կոպերը ժպտում էին, կարծես համոզված էր, որ վերջապես կովեց իր կռիվը մինչև վերջ:

Ընդհանրապես, Գալշոյանի գեղարվեստական տեսիլքները թեն բարձրանում են մի կենտրոնաձիգ հիմքի վրա /Մարութա սար, նրա գավակներ, սարին իջնող մեզ/, բայց ամեն անգամ դրանք հարստանում են նորանոր բանաստեղծական գյուտերով ու արուսցուման տարակերպ միջոցներով: Գրականագետ Լևոն Ղազարյանը իրավացիորեն դրանք կապում է ռոմանտիկական արվեստի ավանդույթների հետ,

իսկ գրականագետ Ստեփան Թոփչյանը, մտորելով պատմվածքներում խոր հուն բացող «երևակայականի և իրականի, ներկայի և անցյալի սահմանագծերում պատասպարված և ուրիշ մի աշխարհից հայտնված տարօրինակ մարդկանց» մասին, բնական կապ է տեսնում այս նոր հեղինակի և հայ «պատրանքային» գրականության մոտ ու հեռավոր ավանդույթների միջև: Նա գրում է. «Պատրանքը ոչ միայն պատմական որոշակի արմատներ ունի, այլև գեղարվեստական ընթացքի որոշակի արմատներ... Համաստեղի, Մնձուրու բանաստեղծական աշխարհում տեսիլքը դարձավ գերիշխող, պոետիկական սկզբունքի վերածվելով Ակսել Բակունցի մոտ: Այս վարպետների արվեստի ժառանգորդն է Մուշեղ Գալշոյանը՝ նույնպիսի մի վարպետ» [Մարութա սարի ամպերը. գրքի վերջաբան-հոդվածը]:

«Մարութա սարի ամպերը» պատմվածաշարում ուրույն մի խտացում է «Քեռի Թորոսը»: Ամբողջ կյանքում թշնամու դեմ կռիվ տված, վառվող ածուխը ափերի մեջ թուրք ոստիկանին հրամցրած հռչակավոր քեռի Թորոսը ի վերջո մտովի հասնում է այն զգացողության, որ հավիտենական հակառակորդը՝ Մեհմետ էֆենդին, կարիճի կեռ ճիրաններով վերածվել է քաղցկեղի ու մխրճվել իր կոկորդը: Սա Թորոսի համար դառնում է սևեռուն գաղափար: Միակ փրկությունը կարճկոր հեսանած դանակը հիվանդ կոկորդը խրելն է. «Չէ, էլ քեզ փրկում չկա, էլ իմ ձեռքից չես պրծնի», - ասում է նա և ցուցամատը ոխով տանում դեպի կոկորդը: Քեռի Թորոսի վճիռը ոչ թե ինքնասպանություն է, այլ դատավճիռ, այլ շարունակվող կռիվ թշնամու դեմ, դրանով իսկ՝ ինքնազատագրում, ինքնափրկություն:

« - Հլա կխաբիս զիս... պիտի քեզ երկու կես անիմ, ճիշտ ու ճիշտ՝ երկու կես: - Քեռի Թորոսը շոշափում էր կոկորդը, ուզում էր ամենահարմար տեղը գտնել, ճիշտ տեղը...» [ն.տ., էջ 199]:

Թորոսի վերջին միտքը հեռակա ուղղված է իր անվանակիր ծոռանը. «էղնի ու ձկուկ, հետ դառնաս իմ եկած ճամփով... Էն ճամփեն, սար ու ձորի մեջ քանց թել խճճված կովի ու կոտորումի իմ մոլոր ճամփեն, դու կծկիս ու ետ դառնաս, ձկուկ...» [ն.տ., էջ 198]: Սա արդեն սերնդի կտակն է, ոչ միայն քեռի Թորոսինը, որին տեր պիտի կանգնել ինչպես կտակած գանձին:

«Կանչ» պատմվածքում մենք տեսնում ենք պայծառ խտացումներ: Հեռավոր երիտասարդական տարիների սիրո կանչն է դա՝ ողբերգականորեն ընդհատված և

ժամանակների մեջ վերստին գտնված, որն ուղղվում է կրկին այն օրերին, երբ երազի մեջ մարմինը փափուկ ու անկշիռ թռչում էր հայրենի դաշտերում: Օր ծերության հասած լեռնցի Ջորոն օրերից մի օր դաշտավայրի գյուղերից մեկում հանդիպում է իր առաջին սիրուն, որը հիմա տարիքն առած մի կին է, մեծ գերդաստանի մայր: Նրա հոգին թունդ է լինում և ծուռ սասունցին, մոռանալով ամեն բան, հնչեցնում է վաղնջական օրերի կանչը. «Ալեե՛...», իմ հոգին, Ալեե՛...», պատեպատ է տալիս իրեն, որ մի ճար գտնի՝ նորոգելու իր սիրո վերջապես գտնված երազը:

Բանջար հավաքող կրակի կտոր աղջկան նա տեսել էր ու աչքը վրան գցել ուղիղ հիսունհինգ տարի առաջ: Հիսունհինգ տարի առաջ գտավ իր աննման պստիկ Ալեին՝ կորցնելու համար: Եվ հիմա կես դարից ավելի պահված թունդ գինու պես կարոտի թանձրացած մի ծուխ է դուրս գալիս նրա հոգուց: Մա վարպետորեն գտնված հոգեբանական պահ է, վիճակի պեզիա, որ բացվում ու ծավալվում է նոր ալիքներով, հորձանք տալիս զարմանալի ուժով: Մնացածն այդ պահի գյուտի լրացումն է, բացատրությունը, որ բարեհաջող «տեղ է հասցնում» պատմողը: «Այս կապույտ աշխարհն իրենն է, այս դաշն առավուտը, մետաքսաքող Մարութա սարն իրենն է, Տիրամայր վանքի գլխին որպես լույս իջած ճերմակ ամպի պատառն իրենն է, Տալվորիկ ծուռ գետի գոչոռչունը, գյուղի գլխին բզկտված ծուխը, այս խլրտուն ու խլուշտ-մլուշտ ուլերն ու գառները իրենն են, արևը, երկինքը, այս ծաղկած քարերը, ժայռը, որին կանգնած՝ թափով պտտում է պարսատիկը՝ վրժժ-վրժժ-վրժժժ, այս խելառ պարսատիկը իրենն է, Ալեն... ծաղկեպսակը գլխին քարից քար թռչկոտող պստիկ Ալեն իրենն է, ուրիշ ոչ մեկինը չէ, իրենն է ու իրենը» [ն.տ., էջ 168]:

Կարելի է նկատել նաև, որ հիշյալ պատմվածքը հորինված է կապույտի գերակշռությամբ: Գրողն իր նյութը թրծում է այնպիսի վարպետությամբ, ողողում այնպիսի ջերմությամբ ու լույսով կորուսյալ աշխարհի ու անստույգ ճակատագրի պատառիկները, որ թվում է, արձակի վիպական բնույթը պետք է տեղի տա այս անկասելի հորձանքի առաջ: Սակայն արվեստագետի անուրանալի ձիրքը ապահովում են կյանքի կենդանի, շարժուն ընթացք, հարաճուն դինամիկա, անկաշկանդ, բնական պատում՝ ստեղծելով ստեղծագործական տարրերի սերտ ամբողջություն: Պատմվածքի ստեղծագործական տարրերի զննությունը ի հայտ է բերում բարձր ճաշակ, ներդաշնակություն, չափի զգացում: Շարադրանքն այնքան

ներդաշնակ է նյութի լեզվին ու ոճին, որ, թվում է, պոկվել է ժողովրդի շուրթերից՝ անբռնագրոս ու ճկուն, սեղմ ու բազմիմաստ: Սա վերաբերում է ժողովածուի գրերի բոլոր պատմվածքներին: Դրանցից մի քանիսը, խորացնում են գրողի բնագագացությունը, հոգևոր եղբայրությունը, հարազատությունը հողին, քարին, թփին, ծառին: Մի տեսակ տիեզերական համագագացողություն, որը արտահայտված էր Համաստեղի ու Ակսել Բակունցի երկերում: Ահա դրանցից մեկը «Շուկան» պատմվածքում:

«Առաջին անգամ ուռք էր դնում քաղաք, առաջին անգամ էր տեսնում շուկա՝ գույնզգույն մրգերով, տաքդեղի՝ կարմիր շարուկներով, կուժ ու կուլաներով, դուքանների շարքով, դուքանների ճակատին ի կախ նախշուն չթեր, ավան արբեշում, դուքանների դռներին իրեն հասակակից տղաներ՝ մաքրագետս - մաքրաերես և սանրված, երգեցիկ ձայնով գնորդներ էին կանչում, շուկան լցված էր հրավերք-կանչվոտությամբ, փող ու սրնգի կանչով, դափ ու դիտլի կտկտոցով. շուկայի երկնքում գվվում էին մեղուները, օդը շաղված էր մրգերի ու գինու բույրով, անծանոթ մի բույր պնչները խուտուտ էր տալիս, և ինքը մտածում էր, որ դա՝ անծանոթ ու հաճելի այդ բուրմունքը, դուքանների դռներից առձայնող աշակերտների խաս զգեստներինն է...» [ն.տ., էջ 285]:

Բնաշխարհիկ մարդու վիրավորված՝ արժանապատվությամբ Տոնեն խոր ցավ է ապրում. քաղաք է եկել ու ոչխար է բերել ծախելու: Գալիս աջից, ձախից խփում են ոչխարին, իբր լավն ու վատն են ջոկում, հետո փողը շպրտում են երեսին՝ «Առ, գնա ապրի», և ոչխարը զցում մեքենայի մեջ, տանում: Իսկ ոչխարի առևտուրը Տոնեի համար ոչ միայն առ և տուր էր, այլև, դրանից առաջ, մարդկային վերաբերմունք, բարև ու Աստծու բարի խոսք, զրույց, անգամ սրտակցություն: Դա այդպես է, որովհետև Տոնեն ոչխարի հետ մեկտեղ ամիսներ շարունակ սար ու ձոր է չափչփել, այդ ոչխարի հետ քնել ու արթնացել: Ասել է, թե Տոնեն՝ բնության զավակը, ակնկալում է հարազատի վերաբերմունք, որը չկա, վերանում է:

Գրքի գեղեցիկ պատմվածքներից է նաև «Մուշ քաղաքի վերին թաղի տղան», որտեղ նույնպես տիրաբար իշխում են էրգրի հիշողությունները: Մլեհը, տեսնելով արծվին, բերկրանք է ապրում՝ երևակայելով, թե նա թռել եկել է իր հայրենի եզերքից:

«Կարո՞ղ է, կարո՞ղ է,- Մլեհի սիրտը թայրտաց, -կարո՞ղ է էս արծիվն էրգրի արծիվներից էղնի» [ն.տ., էջ 370]:

Նրա հերոսներից ամեն մեկի մեջ կա արվեստագետի հոգու մի մասանիկը: Ներկա գրքում էլ կատարվել է նույնը: Սակայն այդ հերոսները, որքան էլ օժտված են վիպային հատկանիշներով, նույնքան էլ իրական են: Ավելին, նրանք իրենց նախատիպերն ունեն անցյալով ու ներկայով, որոնց շրջապատում ծնունդ է առել ու ձևավորվել գրողի մարդկային ու ստեղծագործական նկարագիրը: Պատմվածքներում ընդգծվում է նա չհասկացված ցավը, որն էլ ավելի է խորացնում անարդարության զգացումը, պարտությունն ու կորուստը, վրեժխնդրության ցանկությունը:

Այս պատմվածքների մեջ առանձնանում են այլ հերոսներ ևս, որոնց ներքին կոիվը իրենց հոգևոր ու բարոյական անկախության համար է: Այդպիսին է հաշվետար Ներսեն՝ համանուն պատմվածքի գլխավոր հերոսը, որը կեսգիշերին գնում է շրջկենտրոն՝ շրջկոպի նախագահ Վիրաբ Եգորիչից ետ պահանջելու մի քանի ժամ առաջ նրա ծննդյան հանդեսին արտասանած կենացը, որովհետև կենացատերը արժանի չէ իր խոսքին, և ինքը չի կամենում, որ սխալ խոսքի վրա իջնի լույսը բացվող օրվա: Ներսեն չի գտնում իրեն, քանի որ կորցրել է սովորական զգոնությունը և նմանվելով սեղանակիցներին ու ճոխ սեղանի հարուցած բավարարվածության զգացումին՝ արտաբերել է անարդար ու սուտ խոսքեր: Ի վերջո, գյուղից մինչև շրջկենտրոն ոտքով մի կերպ բավական ճանապարհ կտրելով՝ նա կանգնում է պաշտոնյայի առաջ ու՝

«-Իմ ոտք էլ քու շեմից ներս չի մտնի: Ես եկա զիմ խոսքն հետ առնիմ ու էրթամ... Ես զիմ բաժակաճառն է կառնիմ, զիմ գովքն ետ կառնիմ... Դու ինչ հայրենասեր...» [ն.տ., էջ 209]:

Չկաշկանդվող ազատության ու մարդկային արժանապատվության նախանձախնդիր է նաև խութեցի Ափրեն: Մեծ ջանքերով նա իր ձեռքով տախտակում է սենյակի հատակը, բայց երբ կինը դիտողություն է անում, թե ուր է ցեխոտ կոշիկներով նա ներս մտնում, նույն արագությամբ էլ խենթ սասունցին վերցնում է լինգն ու արքանը և քանդում, դուրս թափում իր խփած տախտակները: Մա մարդկային այն անհատականությունն է, որ չի հանդուրժի ոչ մի նվաստացում, նույնիսկ յուրայինների կողմից, որքան էլ դա ծիծաղելի թվա առաջին հայացքից: Այս

բնույթի պատմվածքներն էլ ավելի են ընդլայնում Գալշոյանի հերոսների մարդաբանական «տարածքը», նպաստում բացահայտելու էրգրի հոգևոր մթնոլորտի առանձնահատկությունները:

Ահա և փողփուչ Մելոն, որը ձեռնափայտի չափ երկար չիբուխով խոյերին... ծխել է սովորեցնում: Բարևող երիտասարդին հարցնում է, « Դու ով ես, որ զիս կճանչնաս»: Հետո, իմանալով, որ երիտասարդը ում տոհմից է, սկսում է մի պատմություն նրա գերդաստանի մեծերի ու իր անցյալի մասին, խոսում ու մտաբերում այնպիսի դեպքեր ու այնպիսի մանրամասներով ու ինքնամոռացությամբ, որ շրջապատի մարդիկ հանկարծ գլխի են ընկնում, որ Մելոն արդեն մոռացել է իրենց գոյությունը և իր մտքերի հետևից ընկած՝ գնում է դեպի իր գոյության սկիզբը, դեպի էրգիր. «Մոռացել էր մեզ, մոռացել էր իր տեղը, մոռացել էր, որ խոսում է» [ն.տ., էջ 235]:

Այս ամբողջ շարքին ուղեկցում է նաև մի դառը զգացողություն՝ խորացված ու խտացված հատկապես «Մեղապարտը» պատմվածքում: Դա ազգային ողբերգության անտեսվածությունն է, ուրիշի ցավի հանդեպ անտարբերությունը: Երբ օտարին պատմում ու բացատրում ես, թե ինչ է հայրենիքի կորուստը, բայց նա այդպես էլ չի հասկանում կամ գուցե չի կամենում հասկանալ: Այս ցավը դեռես Վահան Տերյանն էր արձանագրել. «Մեզ չի հասկանա օտարերկրացին, մեզ չի հասկանա սառն օտարուհին»: Հայրենիքի, միասնության անսահման խոր զգացումն արդեն ծնվում է այն ժամանակ, երբ օտարության մեջ հայը հանդիպում է իր հայրենակցին և սիրտը բացելու, իր կյանքի գաղտնիքը նրան վստահելու հետ մեկտեղ նրան ասում է. «Դու իմ էրգիրն ես... Քաղաքն օտար, քաղաքի լեզուն ու մարդիկ օտար, փողոցն օտար ու տունն օտար ու հարսն օտար, թոռնիկն իր խելքը կնոջ ու գինու տված ու անձանոթ, ու տան մանրիկ երեխեքի լեզուն օտար ու անձանոթ: Դու իմ էրգիրն ես...» [ն.տ., էջ 343]: Ծովասարցի Օհանը կյանքի մայրամուտին վճռում է գնալ իր ծննդավայրը, որովհետև «ձեն է լսում, հոր ձենը»: «Էրգիր է կերթամ, իմ օղորմածիկ հերն է կանչե զիս, կերթամ» ասելով ուրախ-ուրախ նստում է շտապօգնության մեքենան, որ կանչել են անհանգստացած յուրայինները:

«Մարութա սարի ամպերը» գիրքն ավարտվում է «Մամփրե արքան» պատմվածքով, որը ճիշտ նույնպիսի խտացում է, ինչպես շարքի առաջին պատումը: Հայրենիքի հիշատակները փրկել կարելի է նաև գրով. գրով պահ տալ՝ սերունդներին

պատմական ճշմարտությունը: Հակառակ դեպքում թշնամին ամեն ինչ կսեփականի, իրենը կդարձնի ոչ միայն քարտեզը, որը շարունակ վերաձևվում է այս աշխարհի գորեղների կողմից, այլև ոգեղեն սրբությունները: Պատմվածքը գեղագիտական հատկանիշների, բովանդակային առանձնահատկությունների առումով ինչ-որ չափով համախմբող նշանակություն ունի գրքի համար: Նախորդ բոլոր պատմվածքները պայմանականորեն կարելի է համարել «Մամփրե արքայի» բաղադրիչները՝ իրենց անկախ գոյությամբ հանդերձ: Այս երկում նույնպես խաչաձևվում են ներկան ու անցյալը, հուշն ու իրականությունը, հայ պատմական հողն ու նորագույն եզերքը: Կենտրոնական կերպարի նախատիպը եղել էր իրական դեմք՝ Փեթարա Իսրոն՝ գրողի՝ մորեղբայրը, որ քառասունյոթ տարեկանում գրագետ դառնալով՝ գրել էր հայոց ազատամարտերի պատմությունը: Չմոռանալն արդեն կոչվ է, ասում է մեզ գրողն ու հակադրվելով լացուկոծին ու սուտ առասպելներին՝ առաջնային է դարձնում ժողովրդի արժանապատվության հարցը, Ծիծեռնակաբերդի կողքին դնում Սարդարապատն ու Մայիսի 28-ը:

Օր ծերության Մամփրեն ցանկանում է գրել- կարդալ սովորել, թեև բոլորին այս գաղափարը ծիծաղելի է թվում: Գրաճանաչությունը Մամփրեի համար սովորական քմահաճույք չէ, նա չի կամենում սովորական գրագետ մարդ դառնալ, քանի որ նրա համար գիրն ու գիրքը՝ տեղեկատվության սովորական աղբյուր չէ, այլ յուրատեսակ կոչվ՝ հանուն անտեսված անարդարության: Դա Մամփրեի վրեժն է թալանչի Օսմանից, նաև իր ապրած կյանքի արդարացումը: Իր պատանության օրերին անավարտ էր մնացել հայոց այբուբենի դասը: Աննախադեպ հայոց աղետը կեսկատար էր թողել հայ սերունդների նաև այս տենչը: Տպավորիիչ է ներկայացված Տեր Հարությունի դասը, հայ գրերի էության նրա մեկնաբանությունը:

«Հայոց տառերը՝ կարմիր են, - բացատրել է Տեր Հարությունը - քանզի սուրբ Մաշտոցը իր սրտից է հանել ի լույս: Եվ կարմիր են, քանզի թրծվել են արդար արեգակով: Եվ կարմիր են, քանզի սրբազան կոթիվների են մասնակցել: Եվ ասեղնագործում էր հանդարտիկ՝ հեռվից ու մոտիկից ուշադիր զննելով, երբեմն այնպես վերացած, որ թվում էր, թե հայոց տառերը նոր-նոր հորինվում են և ինքն է հորինողը: Օրը՝ մեկ տառ...» [ն.տ., էջ 382]:

Գոնե գրով փրկել հայրենի հիշատակները մոռացումից պահ տալ սերունդներին, այլապես թշնամին իրենով կանի ամեն, ամեն ինչ, նույնիսկ հիշողությունը...

Քնարականությամբ հանդերձ՝ Մուշեղ Գալշոյանը վարպետ պատմող է, պատմում է, ինչպես ասացողը: Նրա հերոսները պարզ են ու միամիտ, ազնիվ ու արդար, բռնկուն ու հերոսական: Պերճ Զեյթունցյանը գրել է. «Նա համառ ու սևեռուն գաղափար ուներ, գրում էր հանուն այդ գաղափարի, ապրում էր այդ գաղափարով. Երկրի գաղափարն էր դա, կորուսյալ հայրենիքի մաշող ցավը»:

Գլուխ 2-րդ

Բնաշխարհիկ մարդկանց հոգեբանական դրաման «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարում

Ամբողջությամբ «Մարութա սարի ամպեր» ժողովածուն միասնական վիպական մտածողության արգասիք է : «Սասունցի Դավիթ» էպոսից մինչև «Մարութա սարի ամպերն» ընկած հեռավորությունը մարդկային կյանքի հազար տարվա պատմություն ունի: Այս ժամանակի մեջ մաքառած ու գոյատևած «Էրգրի» մարդկանց կյանքում շատ բաներ են փոխվել, ավերվել ու կորսվել, սակայն նրանց հոգու ռիթմն ու բարոյականության սկզբունքները մնացել են անսասան: Անհիշելի ժամանակներից պատմության դժվարին ծործորներով «Էրգրի» մարդիկ հավատով, համատորեն քայլել են անընդհատ նորացող ժամանակների միջով՝ իրենց կերպը, աշխարհընկալումը դրոշմելով ազգային էպոսում, հին ու միջնադարյան պատմագրության, նոր ժամանակների գրականության մեջ: Այսօր մեզ հետ կողք կողքի ապրող «Էրգրացին» շարունակում է մնալ նորագույն գրականության ուշադրության կենտրոնում: Ինչպիսի՞ն է «Էրգրի» մարդը, ի՞նչ է ուզում նրա անհանգիստ հոգին, ո՞րն է նրա երազն ու մուրազը, մարդկային բարոյականության չափը ու կշիռը: Այս ամենը մենք գտնում ենք «Մարութա սարի ամպերը» զարմանալի գիրքում:

«Էրգիրը» Սասնա ծոերի աշխարհն է, հայրենասեր նահատակ Խութեցի Հովնանի աշխարհը: Այսօր «Էրգիրը» նրա մարդկանցը չէ, «Էրգրի» ցավը աշխարհի ցավն է, բայց աշխարհից աննկատ «Էրգիրը» նրա մարդկանց համար միայն կորուսյալ եզերք չէ, այն մարդկային խիղճ է, ազնվություն, բարոյականություն, արդարամտության չափանիշ: «Էրգրի» գաղափարը կրող մարդը չի կարող դավաճանել, խորամանկել, չի կարող ատել ու չսիրել: Անարդարությունն ու կեղծիքը նրա թշնամիներն են: «Էրգրի» լեզուն ու երգը անկեղծ է ու քաղցրաշունչ: Նրա մարդիկ ազգերի բարձր ու հավասար սկզբունքների վրա հենվող ջատագովներ են: Երեխայի պես անկեղծ են, անմիջական ու նաև համեստ, մեծի պես իմաստուն են և աշխարհանվեր, ինչպես Սանասարի որդին, թոռն ու ծոռը: Նրանք բարոյականության բարձր ու անզնիվ դասերի, սկզբունքների կրողներն են. նրանց ազդեցությունը

իրենցից հետո եկող սերնդի վրա հիմնավոր ու վերջնական է: «Էրգիրի» մարդկանց ու իրեց որդիների միջև չկա ու չպիտի լինի հայրերի ու որդիների՝ աշխարհում գոյություն ունեցող հակասությունը, որովհետև նրանց էության մեջ ապրող ու շարունակ բյուրեղացող գաղափարն ու ոգին հիմնավոր հեռագնա, ուստի և անքննելի ու անվիճելի է:

Այդ ոգին, այդ գաղափարը, այդ նպատակը բնական աշխարհի բոլոր չափանիշներով արդարացված է: Այս մարդիկ հավաք են, պարզ ու մաքուր իրենց տուն ու օջախով, իրենց շրջապատով, կեցվածքով, հագած-կապածով, խոսք ու զրույցով, «Էրգիրի» նկատմամբ ունեցած աներկբա սերը կանխորոշել ու նախապայման է դարձել այն նվիրվածության ու անմիջականության, որ նա տածում է դեպի իր աշխարհի մարդիկ, դեպի իր սեփական ընտանիքի անդամները՝ տղան, հարսը, թոռը, դեպի հարազատն ու բարեկամը, ընկերն ու հարևանը: «Էրգիրի» մարդկանց զավակը պիտի տուն, տեղ, ընտանիք ունենա: Այդ տանը, այդ ընտանիքում համերաշխություն ու փոխադարձ հարգանք պիտի լինի: Նրանց կարծիքով բաժանությունը, տուն ու երեխա, արտ ու արոտ թողելը մեծագույն չարիք է: Խոտորը, փառասերը, մեծամիտը, նյութապաշտը, երկչոտն ու քծնողը «Էրգիրի» թշնամիներն են: «Էրգիրի» մարդիկ գործով, տուն ու տեղով, որդիներով, մտքով, տենչանքներով, գերդաստանով այնտեղ են՝ Կաբլոքարի կատարին, Տավորիկի երկնքում: «Էրգիրը» նրանց համար երազ է, սակայն նրանք այդ երազի մեջ արթուն են, քայլում են այդ երազային ճամփաներով, մտնում իրենց բաց մնացած տան դռներից ներս, զրուցում իրենց խորոտիկ հարսների ու քույրերի հետ, մակադում իրենց հոտը, հնձում ու կալսում իրենց կիսատ մնացած արտն ու կալը: Այս մարդիկ, աչքը լույս կտրած, շարունակ նայում են հեռու հորիզոններին, կապույտ երկնքին, բարձր սարերի գագաթներին, շարունակ վերև են նայում՝ աստղերին, արևին: Չառամյալ էրգրացին եթե ի վիճակի չէ տնից դուրս գալ, շարունակ պահանջում է բաց պահել տան դուռը, պատուհանը, երդիկը, նրա համար «Էրգիրը» երկնքում է՝ Մարութա թուխ ամպերով ծակված:

Իր կյանքը առոք-փառոք տեսնելիս, բերք ու բարիք դիզելիս նա ջղաձիգ անհանգստություն է ապրում, աչալրջության ու զգոնության ճիգեր արձակում: Դա նրա դարերի փորձի նստվածքից է գալիս: Ստեղծելուց առաջ, նախ, պաշտպանել ու պահպանելու համար պիտի մտածել: Նրա կարծիքով բնությունից օտարված մարդն

անսկզբունք է, դյուրաթեք: Իր մարմնի ցավն զգալիս «Էրգրի» մարդը բնության գիրկն է վազում՝ հավատացած, որ մայր բնությունը իր ցավը կբուժի: Նա իրեն ու մարդկանց ղեկավարող հասարակական սկզբունքների ճշտությունը ստուգում է բնության օրենքներով, «Էրգրի» օրենքներով: Այդ հերոսն իր ստանձնած գործի մեջ, լինի հանրային դաշտի հանդապահ թե հովիվ, ռազմի դաշտում կռվող զինվոր, հլուհնազանդ է կարգ ու կանոնին, իր ղեկավարին ու հրամանատարին: Սակայն սխալ ու թերացում, հարցի անարդար լուծում նկատելու դեպքում նա դառնում է ըմբոստ և պատրաստ է կշտամբել, պատժել մեղավորին այնպես, ինչպես կկշտամբեր ու կպատժեր իր որդուն, հարազատին: «Էրգրի» մարդը շարունակ «Էրգրացի» է փնտրում «Կա ու չկա, Էրգրացի է»: Հանդիպելիս հարց ու փորձ է անում, ճշտում նրա տոհմաձառը՝ նրա ու նրա ճանաչած մարդկանց մեջ տեսնելով իր կորցրած եղբորը, քրոջը, հարազատին, համագյուղացուն, իր երբևէ սիրած աղջկան: Նրա ականջը միշտ ունկնդիր է բնության ձայնին: Ականջին հնչում է հայրենի ծառերի խշշոցը, գետերի շառաչը, աղբյուրների կարկաչը, տեսնում երազի երանգներ ստացած ծննդավայրի պայծառ պատկերները: «Էրգրի» թռչունը, ծաղիկն ու խոտը նրա համար մասունքներ են: Այդ մասունքներին հանդիպելիս նա ձգվում է, զգաստանում, ջահելանում, անձնավորում ու զրուցում է նրանց հետ հավասարը հավասարի պես:

«Էրգիրը» մարդով է «Էրգիր»: Մարդը իր սեփական հողի մեջ պետք է ծլարձակի, ճյուղ, ծաղիկ ու պտուղ տա, աճի ու գորանա: Նա չպիտի լքի իր աշխարհը, եթե անգամ արհավիրք է, դավ, համաճարակ ու կոիվ: «Էրգրի» հողն ու ջուրը, լեզուն ու երգն ունեցողը արժանապատիվ մարդու իրավունքն արդեն իսկ նվաճում է, եթե անգամ մի կտոր կորեկի հացով է ապրում: Օտարին հարգելը, օգնելը հյուրասիրելը սուրբ սկզբունք է: Օտարի առջև նվաստանալը, նրան ընդօրինակելը խեղճություն ու անճարակություն է: «Էրգրի» մարդը վշտանում է, բայց չի զայրանում, երբ օտարը, այլազգիները իրեն չեն հասկանում, իր հոգու խորքը չեն տեսնում, ընդունում է, որ նրանք մեղավոր չեն, որովհետև «Էրգրում» չեն եղել, աղ ու հաց չեն կիսել բնաշխարհիկ մարդու հետ, չեն ապրել «Էրգրի» բախտ ու ճակատագրով:

Մ. Գալշոյանի «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարի հերոսները շարունակում են մնալ անցյալի կենսական նվաճումների ժառանգորդը: «Ընդհանրապես մեր վերջին շրջանի գրականության մեջ ներկայացվում է հերոսի այն

վիճակը , - գրում է գրականագետ Ջավեն Ավետիսյանը,- երբ խոր հոգեբանական ցնցումը ստիպում է մարդուն վերհիշել իր անցյալը, հաշվետու լինել իր անցյալի համար: Հերոսի հոգեբանական հետադարձը հեղինակին հնարավորություն է ընձեռում բացահայտել կերպարի էությունը ժամանակի տևականության մեջ: Ժամանակը ոչ միայն ձևավորում է նրա բնավորությունը, այլև զարգացում ու բացահայտում է այն: Մարդը, ուստի և գրական կերպարը, մեզանում, որպես օրենք, իր մեջ շարունակ կրում է պատմության բեռը »(2, էջ 155) :

Ներկայի պահանջից բխող հայ գրողի և հայ մարդու վերադարձը դեպի իր անցյալը խոսում է ժողովրդի և նրա գրականության կենսունակության մասին: Ժողովրդի և երկրի կապը զուտ աշխարհագրական, բնակլիմայական հարմարվողականության հետևանք չէ: Այն, նախ և առաջ, պայմանավորված է հոգևոր ու մշակութային արժեքների այն ամբողջականությամբ, որ ստեղծել է ժողովուրդն իր երկրի տարածքի վրա: Սա է պատճառներից մեկը, որ երկրի անբարենպաստ վիճակի պատճառով ստեղծված տրոհումներից ու ավերումներից հետո այս արժեքները մշտապես ձգել են աշխարհով մեկ ցրված ժողովրդին՝ ստեղծելով «որտեղ քո գանձն է, այնտեղ էլ քո սիրտը» անհրաժեշտությունը:

«Մարութա սարի ամպերը» պատմվածաշարի նյութն արդեն կար Մ. Գալշոյանի առանձին գրքում: Թե՛ Ձորի Միրոն, թե՛ նրա սերնդակիցներն արդեն իսկ այդ պատմվածքների հերոսներն էին, որոնք ապրում էին հեղինակի մեջ և ապրեցնում նրան: Հեղինակի նպատակը մեկն էր՝ կորստից փրկել և գրականության միջոցով ժամանակներին պահ տալ հեռացնող սերնդի վերջին ներկայացուցիչներին, որոնցից ամեն մեկը ներկայացնում էր ավերված մի տուն ու գերդաստան, հրկիզված ու դատարկված գյուղ ու քաղաք, կորուսյալ մի եզերք՝ կորցրած ծննդավայր, կորցրած երկիր: Այսինքն՝ ժամանակներին պահ տալ հեռվում մնացած Մարութա սարն ու Տավրոսը, Մշո դաշտն ու Արածանին, ժամանակներին պահ տալ այդ սրբազան վայրերից արտաքսված ականատեսների աչքերով, հուշերով, կորուստներով, տպավորություններով, կյանքով ու կենսագրությամբ: Կարոտի երգ էր հյուսում Մ. Գալշոյանը հեռվում մնացած երկրի մասին : «Հայ գրական հերոսի մեջ ընդգծվող մի հոգեբանական գիծ է այն, որ թերևս ավելի շատ է արտահայտված պոեզիայում, կորուսյալ եզերքները տենչալու և իդեալի իրականացման ռոմանտիկական

պատրանքներով ապրելու հոգեբանությունն է: Թերևս սա է պատճառը, որ ռումանտիզմը մեզանում առավել երկարակյաց եղավ ու դեռ շարունակում է այս կամ այն ձևով դրսևորել մեր գրականության մեջ»(2, էջ 151):

Կարոտի կանչ, կարոտի երգ ... Սա հայ գրականության մեջ արդեն իսկ ստացել էր իր անունը՝ կարոտի գրականություն, որի արմատները գնում էին դարերի խորքերը և կերպարանք առնում՝ որպես ողբի գրականություն: Ողբը պարսիկներից, բյուզանդացիներից, արաբներից, մոնղոլներից, թուրքերից ծվատվող-ծվատված հայրենիքի արյունաքամ մարմնի վրա էր, որին հարալեզներ էին պետք: Իսկ կարոտը արդեն կորցրած հարազատի, միակի, անփոխարինելի հիշողությունն է: Իսկ կարոտը նրա մասին է, ինչը եղել է ու հիմա չկա, ինչը որ քոն էր ու այլևս քոնը չէ: Մ. Գալշոյանն իր հերոսների անցյալ կյանքը տեսնում էր ներկա օրվա մեջ: Այս կողմնորոշումը լիապես առկա է նրա գրեթե բոլոր գործերում: Անցյալի ու ներկայի միասնությունը ձևավորում է Գալշոյանի ստեղծագործության համար այնքան կարևոր նշանակություն ունեցող ժամանակների կապը, որը ժամանակային պարզ հաջորդականությունից վերածվում է հերոսների ներաշխարհին ու հեղինակային հայեցակետը բացահայտող հեղինակային-զգացմունքային կապի: Ահա այս ժամանակների կապն է, որը թե՛ սյուժեով, թե՛ ասելիքի իմաստային ուղղվածությամբ ստեղծում-կառուցում է «Մարութա սարի ամպերը» գրքի բոլոր պատմվածքները: Այդ ժամանակային կապն ունի սկիզբ, շարունակություն և վերջ: Սկիզբը ծննդավայրն է, հայրենի տունը, հայրենի բնաշխարհը, սկիզբը նաև կոտորածն է, գաղթը, շարունակությունը նոր կառուցված տունն է, հայրենիքի աննվաճ հատվածի քարքարոտ լեռները, շարունակությունը նաև նոր ծնվող երեխաներն են, հերկած հողը, վերջը կարոտն է, իրական թվացող հույսը, մանկության ճանապարհներով նորից քայլելու անկորնչելի փափագը:

«Մարութա սարի ամպերը» պատմվածաշարով հայ արձակի մեջ հաստատապես մուտք գործեց այն անիմանալի, անբացատրելի երակը, թելը, որը բնորոշ է Հովհաննես Թումանյանի, Բակունցի և Գալշոյանի հերոսներին: Խորապես ինքնատիպ հերոսների վարքը, բնավորությունը իրար են գալիս՝ նշանավորելով համաժողովրդական աշխարհագրացում, ազգային հոգեբանություն: Գրողը գունեղ երանգավորումներով կենդանացնում, նաև կերպավորում ու անհատականացնում է միջավայրը, որն ունի

իր հոգեբանությունը, արժանապատվությունը և ըմբռնումը, իր անամոք թախիժն ու թաքցրած գաղտնիքը: Գալշոյանի գրեթե բոլոր պատմվածքներում իրականը նրբորեն կտրվում–անջատվում է առարկայական կշռից, նյութական ծանրությունից, շարունակվում մտքում և տրվում երևակայության թռիչքներին: Նման դեպքերում զգացական ապրումն ավելի իրական է դառնում, քան կյանքի կարծր նյութականությունը: Ձևավորվում են համահավաք նկարագրի տեր հերոսներ՝ ողբերգության վկա–ականատեսը, ողբերգությունը վերապրող հեղինակը, իրական ու երազային Հայաստան աշխարհը: Այդ հերոսների գոյության գաղափարական և զգացմունքային հենակետերն են ողբերգության ճանաչումը, հայրենակիցների համախմբումն իրենց ցավի ու հույսի շուրջ և նախնիների երկրի առասպելական հարության տարփողումը: Կորուստի և ողբերգության ահավոր զգացողությամբ հեղինակը ժողովրդին պարտավորեցնում է երբեք չմտնել մոռացության գետը, չվերամկրտվել Լեթայի ջրերում, այլ պահել–պահպանել ու սերնդեսերունդ փոխանցել հիշողությունը մեծ դեպքերի ու հայրենիքի մասին: Հիշողությունը պայքարի զենք է և գոյատևման հնարավորություն:

«Մարութա սարի ամպերը» պատմվածաշարի տասնինը պատմվածքները մեկ հերոսի պատմվածքներ են: Մեկ հերոսի՝ թե՛ որպես տվյալ պատմվածքի հերոս, և թե՛ որպես գրքի բոլոր պատմվածքների հերոս: Մեկ հերոսի պատմվածք. սա նաև նշանակում է անցած կյանքը մտասևեռումով խտացնող մեկ վիճակի, դեպքի ու հարաբերության պատմվածք: Թեև գրեթե բոլոր պատմվածքներում էլ կան լրացնող հերոսներ, զուգահեռ գծեր, այնուամենայնիվ, դրանք ինքնավարություն չունեն: Ամեն ինչ խտանում է մեկ հերոսի մեջ, մեկ կեսնագրության մեջ և դառնում սկիզբն ու վերջը ի մի բերող գեղարվեստական սկզբունք: Այս առումով տեղին է պատմվածաշարի հերոսներից մեկի՝ Հակեի գրույց–խորհրդածության հետևյալ հատվածը. «Ես ու դու մեկ մարդ ենք, Տիգրան, մեկ ու նույն մարդն: Ասա՝ ինչու՞, թե քու տեսածն ու իմ մեկ է, թե քու ապրածն ու իմ մեկ է, թե քու կորուստն ու իմ մեկ է, թե քու կարոտն ու իմ մեկ է, թե քու ցավն Տիգրան, քու ցավն ու իմ ցավն մեկ է, ուրեմն ես ու դու մեկ ու նույն մարդն ենք: Ես ու դու ու ձեր գեղի օդորմածիկ Մրգերն ու մեր գյուղի օդորմածիկ Կիրակոսն ու... ու թե ճիշտ կուզես իմանալ՝ քու հերն ու իմ հերն, քու պապն ու իմ պապը, իմ պապի պապն նույն ու մեկ մարդ ենք, չունքի մեր ցավն նոր չէ, հին է մեր

ցավն, Տիգրան »(6, էջ 238): Բոլորը նույն պատմության զավակներն են, ուստի և մեկ միասնական են և նույնը:

Մ. Գալշոյանի հերոսները գրեթե միշտ տղամարդիկ են, սերնդակից տղամարդիկ, արդեն տարիքն առած և ծերության հասած տղամարդիկ, որոնք այսօր կան, վաղը չկան: Պատմվածքներից շատերը վերնագրված են հենց տվյալ հերոսների անուններով («Դավոն», «Քեռի Թորոսը», «Ներսեն», «Ծովասարի Օհանը», «Փողփուչ Մելոն», «Թաթոն», «Մամփրե արքան», իսկ եթե տվյալ հերոսների անունով չեն, ապա որոշակիորեն մատնացույց են անում նրանց («Դաշտապահը», «Մեղապարտը», «Մուշ քաղաքի վերջին թաղի տղան») : Մի քանի պատմվածք միայն ունեն նյութի բովանդակությունը բնորոշող զգացմունքային վերնագրեր («Էս հին ու նոր օրեր», «Կանչը», «Գինարբ ծաղիկ», «Պատրանք», «Միայնակ ծառը») և միայն երկուսը՝ նյութի բովանդակությունից բխող առարկայական վերնագիր («Աղորիք», «Շուկան»):

«Եթե բնորոշելու լինենք Մ. Գալշոյանի այս պատմվածքները, ապա դրանց կարելի է տալ «դիմանկար-պատմվածք» որակումը: Յուրաքանչյուր պատմվածք մեկ հերոսի դիմանկար է՝ մեկ հիմնական հոգեբանական վիճակի և որևէ դեպքի նկարագրությամբ, որի մեջ, սակայն, ստեղծվում է տվյալ հերոսի էության ամբողջությունը»(7, էջ 261):

Կառուցվածքով ևս գրքի պատմվածքները ստեղծված են միևնույն սկզբունքով: Հեղինակը ներկայացնում է ներկա կյանքի մի հարաբերություն կամ վիճակ, այնուհետև այդ ներկան ճեղքվում է որևէ դեպքի հիշողությամբ, որը հերոսին ներքաշում է անցյալի մեջ, ապրեցնում նրան կյանքի անցյալով և կյանքի անցյալը ապրեցնում ներկա օրվա մեջ: Ստեղծվում է ներկա ժամանակի մեջ ապրող և ժամանակի հետ շարունակվող անցյալի խիստ իմաստավորված, զգացմունքային առումով խիստ հազեցած մթնոլորտ: Թե՛ հերոսի ներկա վիճակը և թե՛ հուշերի մեջ հառնող անցյալի պատկերները հեղինակը ներկայացնում է գործողությունների շարժման մեջ: Այս գործողությունների շարժումը ևս անցյալի ու ներկայի միջև ստեղծում է միասնական մի գիծ, որն այս դեպքում վերաբերում է հերոսի բնավորությանը: Հերոսը մեր առջև կանգնում է իր պատանեկան խոհերով ու արարքներով, իր առողջացած տարիքին բնորոշ իմաստնությամբ: Երկու տարիք, երկու հասակ: Եվ ինչքանով հասուն տարիքը տերն է իր իսկ պատանեկան

տարիների (քանի որ հուշերը գալիս են այս տարիներից), նույնքանով էլ պատանեկան տարիքն է ապրեցնում կյանքի հաջորդ տարիքները և տեր կանգնում հասուն տախիբի երազներին ու բռնկումներին: Երկու տարիք, երկու հասակ: Բայց երկու դեպքում էլ նույնն է հերոսների ներքին էությունը, հոգու ու մտքի աշխարհը, նույնն է բնավորության լիցքն ու մղումը և ամենակարևորը՝ նույնն է ապրելու իմաստը, կյանքի նպատակը: Տարիքային երկու ծայրակետերի միավորումը տեղատվության ու մակընթացության ալեբախում է հաղորդում նկարագրվող կերպարի, ընդհանրապես նյութի շարժմանը: Հերոսների ներքին հարաբերությունը ավելանում է նաև իր իսկ հերոսներին ուղղված հեղինակային հայեցակետի հարցը: Հեղինակը (ընդհանրապես յուրաքանչյուր հեղինակ) տարրալուծված է իր նյութի մեջ, բայց նաև կան այն կետերը, որոնցում հեղինակի ներկայությունն ավելի որոշակի ու զգալի է:

Մ. Գալշոյանը պատմում է իր հերոսների կյանքի դեպքերը և պատմում է՝ միավորված նրանց հետ: Հեղինակը ընթացք է տալիս իր հերոսներին, հերոսները սկսում են պատմել ու զրուցել և շատ նրբորեն հերոսներին միավորված՝ պատմում ու զրուցում է նաև հեղինակը: Հեղինակային ձայնը, հեղինակային խոսքը, հեղինակի ներկայությունը ձուլված-միախառնված է հերոսների ձայնին, խոսքին, նկարագրին: Միաժամանակ գրքի, ընդհանուր առմամբ, պատմողական բնույթի պատմվածքների մեջ ստեղծված վիպական կերպարների շարքում հեղինակն ամեն անգամ դառնում է իր իսկ հերոսներից մեկը, որն, այս դեպքում, պատմվածքի մեջ ապրում է քնարական ներկայությամբ: Մի կողմից գրողն իր ստեղծած գեղարվեստական աշխարհում ապրում է՝ ձուլված իր վիպական հերոսներին, մյուս կողմից՝ դառնում քնարական հերոս: Եվ օրինաչափ է, որ նյութի մեջ հեղինակի ունեցած այսօրինակ ներկայությունն էլ բնորոշում է պատմվածքների բնույթը՝ վիպական-կերպարային պատմողական պատմվածքներ, գործողություն ու շարժում և դրա հետ մեկտեղ կարոտի շնչով հագեցված խոսքի նուրբ քնարական երանգավորում, որը ոչ միայն երբեմն, այլև հաճախ անտեսանելի է ու թաքնված, ինչպես իր իսկ՝ Մուշեղ Գալշոյանի նկարագրած գինարբ ծաղիկը, որն աճում է քարակույտերի մեջ: Գրողի խոհերի ու հույզերի, բառերի ու պատկերների մեջ ապրում է ժամանակի շնչառությամբ տրոփող մի զգայուն էություն, որն ամեն ինչով հաղորդակից է դարի

հնքին: Խորն ու ընդգրկուն է Գալշոյանի պատմվածքների հոգեբանական տարողությունը: Գալշոյանի գեղարվեստական աշխարհի գունագեղ երանգների մեջ ապրում է նաև նրբին, իր նրբության մեջ խոր ու դրամատիկ մարդկային տառապանքի երգը: Այդ տառապանքի հոգեբանական տարբեր վիճակների մեջ առկա է և՛ պատանեկության տարիների վերհուշ ու կարոտ, և՛ կարոտի ցավ ու սպասում, և՛ բաժանման թախիծ ու լուռ մենություն: Գալշոյանի պատմվածաշարը ծայրը ծայրին շարունակող պատկերների ու իմաստային նրբերանգների մի ամբողջական աշխարհ է՝ մարդկային կենսագրությունների սեղմ նկարագրությամբ: Հարազատության ու տաք մտերմության մի պայծառ ալիք է հորդում Գալշոյանի պատմվածքներից: Հոգիների սրտակցության կենսական հոսանքից եկող ալիք է դա, որ մթուրտը դարձնում է ոգեղեն, հոգիների եղբայրությունը՝ մարդկայնորեն անհրաժեշտ: Լուսավոր հայացքը պայծառացնում է ամեն ինչ և հուշերի մեջ հառնում որպես ոսկեցուլ կապույտ երկինք: Պատմվածաշարում առարկայական որոշակիությունը շատ սահուն ու աննշմար ձևով փոխարկվում է ոգեղեն այլագոյության ներշնչանքի իր սկզբնաղբյուրից, իր բնօրինակից աճում ու վերաճում է երևակայության ազատ թռիչքների: Տեսողությունն ու մտքի հայացքը միասնաբար են ընկալում ու վերարտադրում երևույթը, շարժումը, գոյությունը: Իրական պատումի մեջ հանկարծ կենդանանում է երևակայության տեսիլքը, մտքի ճառագայթը դառնում է վառվող կրակ, որը և՛ երևում է և՛ չի երևում, և՛ կարմիր է, և՛ կապույտ, և՛ լույս է, և՛ ծուխ: Այս անցումներն ու փոխանցումները իրական են ու ճիշտ, որովհետև միտքն ու զգացողությունն այդ ամենը արտածել են նյութից: Կարևորը ոչ թե առարկայական անշարժ ու թանձր հավաստիությունն է, այլ մտքի ու զգացողության հավաստիություն , որի մեջ առկա է և՛ երևույթը, և՛ աներևույթը, և՛ իրականը, և՛ մտքի շարունակության մեջ ինքն իրեն լրացնող ու ձևափոխող անիրականը, և՛ առարկայականը, և՛ երևակայականը, և՛ ըմբռնելին, և՛ խոհի ու ապրումի համադրության մեջ իմաստավորվող անըմբռնելին: Մա կյանքն է, սա մարդն է՝ իր տեսածով և տեսածի մտավոր անդրադարձումներով: Մա գոյության ամբողջությունն է: Այս ամենը ստեղծագործական դիրքորոշում է, անհատական ոճ ու նկարագիր: Շատ պատմվածքներում իրականն ու անիրականը այնքան միասնական են, որ դժվար է ասել, թե որտեղից է սկիզբ առնում հստակ զգացությունը և որտեղ է այն

փոխարկվում զգայախաբության, և թե ինչ հարաբերության մեջ են իրական շարժումն ու մտքի շարժումը: Մարդը միասնական է իր գիտակցությամբ ու ենթագիտակցությամբ:

Մ.Գալշոյանը ժամանակակից հայ արձակի ինքնատիպ ու հետաքրքիր ներկայացուցիչներից մեկն է: Արտաքուստ անաղմուկ, բայց ներքին լարումով ու հետևողական շարժումով նա ստեղծեց իր խոսքի գեղագիտությունը: Ժամանակի ընթացքում հստակվեց ու ինքնուրույնացավ նյութը, նյութի ընկալման կերպը, նյութը վերարտադրվելու սկզբունքը, խոսքի ընդգրկումը, կառուցվածքը: Այս գիրքը, փաստորեն, ի մի է բերում նրա ստեղծագործական ճանապարհը, առաջին գործերից մինչև վերջինները, հրաշալի պատմվածքներ ընդգրկելով այս ժողովածուի մեջ: Եվ պարզ է դառնում, որ այդ ճանապարհի ընթացքում ստեղծագործական միտքը միշտ որոնել է իր ասելիքը, ասելիքի իր ձևը: Այդ որոնման ընթացքում նա գտել ու կայունացրել է զգայությունները վերարտադրելու իր սկզբունքները, պատումի իր եղանակը, բառի ու արտահայտության օգտագործման իր ձևը, նրբերանգները: Զգացողության նրբությունն ու խորությունը, միաժամանակ ճշտությունն ու անգամ ճշգրտությունն առկա են ոչ միայն առանձին նկարագրությունների, բնութագրությունների, այլև ընկած են ամբողջական գործերի հիմքում: Սա հեղինակային հայեցակետ է, որն իր գոյությունը պահպանում է և՛ կառուցվածքային մեծ միավորների մեջ, և՛ փոքր:

«Մարութա սարի ամպերը» պատմվածաշարը բացվում է «Էս հին ու նոր օրեր» փոքրիկ պատմվածքով, որը ոչ այնքան պատմվածք է, որքան հեղինակային նախաբան-նախաշավիղ: Գերդաստանը հավաքվել է շնորհավորելու տան գլխավորի, հենց իր՝ Մուշեղ Գալշոյանի հոր Նոր տարին: Բայց տան հայրն ու պապը կորցրել է ժամանակի համրանքը, կորցրել է տեղի զգացողությունը: Նրա խոսքն այս է՝ ուղղված որդուն՝ «Մուշեղ, էս գարնան Ծովասրի արտերն ի՞նչ ցանենք: Գարի՞ ցանենք, թե՞՞ գլգիլ: Մուշեղ, երեկ չէ՞ մեր խոփ ջարդավ: Մենք Գալշոյ Մանուկի տղեքն եղինք ու մեր գութան կանգնի՞: Հա՞: Մեր գութան կանգնի՞: Էս գիշեր թե բաբոն սարից իջնի, ինչ պատասխան կտաս»(6, էջ 8) : Թոռներն աղմկելով պապին ետ են բերում իր կյանքի հեռավոր ժամանակներից և ասում՝ 1975 թիվն է, Նոր տարի է, ի՞նչ գութան, ի՞նչ խոփ:

«Էս հին ու նոր օրեր...»՝ սա գրքի էության ձևակերպումն է մի կողմից ժամանակների ու պատմաաշխարհագրական տարածությունը կորցրած, Ծովասարի հուշերով ապրող Հովե պապի, «Հոյ Նուբար» երգող նրա համերկրացի Գրիգորի, մյուս կողմից՝ պապի Նոր տարին շնորհավորելու եկած ուրախ ու անհոգ թոռների, երրորդ կողմից՝ հենց իր՝ այդ ամենը տեսնող ու արձանագրող հեղինակի՝ Մ. Գալշոյանի կերպարներով: Այսինքն՝ այս հին ու նոր օրերի մեջ բացվում է անցյալը, պատկերվում է ներկան և նկարագրվում ժամանակների կապը: Անձնականացված–անհատականացված նախասկիզբը դառնում է ճյուղավորվող ու տարածվող ճանապարհ, որով քայլում են Գալշոյանի հերոսները: Մ. Գալշոյանը դարերով արևի տակ թրծված որձաքարի խոշոր ու անմշակ կտորներից գրողի արարչագործությամբ կերտում է այնպես, որ իր հուշարձան-կերպարներն իրենց մեջ խտացնեն թե՛ իրենց ժողովրդի դարավոր պատմությունը, թե՛ բնօրրանից արտաքսված ժողովրդի ողբերգությունը և թե՛ այնուհետև Արարատի գլխին ծագած արևի ջերմությունը: Անմշակ որձաքարը կերպավորելով՝ հեղինակը կերպավորում է իր ժողովրդի ոգին...

Սկիզբը, ինչպես որ կա, այդպես էլ շարունակվում է մյուս հերոսների մեջ: Այսինքն նոր ժամանակներ են, բայց գրքի հերոս դարձած սերնդի ներկայացուցիչներից յուրաքանչյուրի ուշքն ու միտքը անցյալի հետ է, ուր նրանց մանկության, պատանեկության և հերոսական ընդդիմության տարիներ են: Այս ժամանակներն տարրալուծվում են նաև հեղինակի էության մեջ, և նա էլ, միանալով իր հերոսների կյանքին, գնում է նրանց անցյալ ու ներկա օրերին ընդառաջ:

Յուրաքանչյուր պատմվածք ստեղծված է հոգեբանական մի գյուտի հայտնաբերմամբ, որը և դառնում է հերոսների ներաշխարհը ներկայացնելու հիմանական նախապայման: Այդ հոգեբանական գյուտերը, տարբեր լինելով բնավորությունների որևէ կողմը բացահայտելու տեսակետից, ամբողջության մեջ ունեն մի քանի ընդհանրություններ. դրանք առնչվում են մի կողմից դեռևս «Սասնա ծռեր» դյուցազներգության հերոսների, Սասնա տան սերունդների ժառանգների բնավորությունների բնկուն, ինքնամոռաց խենթությունը, խոսքի ու որոշման մեջ համառ ու հետևողական լինելու անզիջողությունը, մյուս կողմից և միաժամանակ իրենց գոյությունը որպես ժողովրդի պատմության շարունակություն համարելու

զգացողությունը, իրենց գոյությունը ժողովրդի պատմությամբ իմաստավորելու բնական տարերքին:

Գրքի «Էս հին ու նոր օրեր» նախերգին հաջորդում է «Կանչը» հրաշալի պատմվածքը, որի մեջ անցած տարիների սիրո կանչով վերակոչվում են և՛ հեռվում մնացած հիշատակները: Երկրի հիշատակներ և հոգու հիշատակներ՝ ծննդավայր և սեր՝ Մարութա սար և փոքրիկ մի աղջիկ՝ Ալե անունով: Հեռավոր տարիների սիրո կանչն է դա՝ ժամանակի գալարափողների միջով ուղղված այն օրերին, երբ երազի մեջ մարմինը փափուկ ու անկշիռ թռչում է հայրենի դաշտերով: Օր ծերության հասած լեռնեցի Ջորոն օրերից մի օր դաշտավայրի գյուղերում հանդիպում է իր առաջին սիրուն, որը հիմա իր պես տարիքն առած մեծ գերդաստանի մայր է: Կրկնապատկված կարոտ և հերոսի՝ ծերունի Ջորոյի ամբողջ էությունը քամող կարոտի մի կանչ՝ «Ալեեե՛ ... Ալեեե, իմ հոգին Ալեեե՛ ...», որ բարձր ու երգեցիկ զրնգում է ձորերում ու լեռնալանջերին, որ խելքահան է անում նրան և դարձնում մի նոր Սասնա ծուռ: Ի՞նչ է պատահել, ի՞նչ է կատարվում, տղայի հարսանիքի համար գինի առնելու նպատակով Թալինի սարերից Արարատյան դաշտի գյուղերը իջած ծերունին հիսունհինգ տարի հետո հանդիպում է իր հին երկրացուն՝ իր առաջին սիրուն:

Բանջար հավաքող կրակի կտոր աղջկան նա տեսել ու աչքը վրան էր զցել հիսունհինգ տարի առաջ: Եվ հիմա կես դարից ավելի պահված թունդ գինու պես, կարոտի թանձր մի ծուխ դուրս է գալիս նրա հոգուց: Հենց դա է գտնված հոգեբանական պահը վիճակի պոեզիան ինչն էլ բացվում ու ծավալվում է նոր ալիքով: Մնացածն այդ պահի գյուտի լրացումն է, բացատրությունը, որ բարեհաջող տեղ է հասցնում պատմողը: Այս պահին էլ է մոռացվում տարիք, ժամանակ ու տարածություն, որովհետև ամենինչ անցնում է, բացի կյանքին իմաստ տված անանց կարոտից:

Նրանց վառվռուն տարիների սիրո կանչը տրորվել է գաղթի ու եղեռնի ճանապարհներին և հիմա վերագտնելով իրար՝ նրանք կարծես թե վերագտնում են իրենց կորցրած պատանեկությունը, կորցրած սերը: «Թե չպիտի լիներ, էն կապույտ առավոտը ինչու՞ ծնվեց, թե Ջորոն էտ առավոտ իր պստիկ, նախշուն Ալեին պետք է գտներ ու իրիկուն չեկած կորցներ, էտ լույս առավոտը ինչու՞ եղավ, Ալե...»(6, էջ 25): Ե՛վ դեպքերի ու գործողությունների շղթան, և՛ անցյալի վերհուշն ու ներկա պահը

պատկերված են այնպիսի հաջորդականությամբ ու ներթափանցումներով, այնպիսի բնականությամբ, որ վիճակի արտասովորությունը վերածվում է բռնկուն ոգեղենության և ավելի պայծառ լույսով լուսավորում հերոսների թաքուն մտքերն ու ապրումները, միանգամից բացահայտում նրանց չապրած կյանքի գաղտնիքները: Ընդհանրացման ուժով կատարյալ մի պատմվածք է «Քեռի Թորոսը»: Ընդհանրացման ուժը ժողովրդի դարավոր վրեժն է իր հայրենիքը հափշտակած ու իրեն խոշտանգած թշնամու դեմ, որ պատմվածքում պատկերվելով դեպքերի ու զգացողությունների որոշակիությամբ աստիճանաբար ձեռք է բերում այնպիսի խորհրդանշական բնույթ հանգում այնպիսի տեսանելի, բայց վերացարկված ընդհանրության, որը, իրոք, գյուտ է ու հայտնագործություն: Կոկորդում ճյուղավորվող քաղցկեղը քեռի Թորոսի համար քաղցկեղ չէ, նա այդ մասին ոչինչ չգիտի: Նա այնքան է հալածվել դարավոր ոսոխից ու գաղթի ճանապարհին խոշտանգված հազարավոր հայրենակիցների մահից հետո այլ բանի մասին մտածել չի կարող, թշնամին առ այսօր հանգիստ չի տալիս իրեն, ահա որտեղից որտեղ նորից գտել է իր տեղը, եկել բուն է դրել իր կոկորդում, որ խեղդի, սպանի, տապալի, ոչնչացնի: Երեք անգամ նա տեսնում է նույն երազը : Դա այն Շեհիտ Բեհմետ բեյն էր, որն իր ասկյարներով հաճախ էր հայտնվում երկրի գյուղում: Դա այն բեյն էր, որին, անգոր ցասումը վրեժ դարձրած, մերկ ձեռքերով վառվող ածուխ էր մոտեցնում պատանի Թորոսը: Հին հուշերի հետ հիշվում են նաև հին առարկաները: Քեռի Թորոսը օրեր շարունակ գյուղի դարբնի մոտ սրում, փայլեցնում է վաղուց մոռացված, մոռացումից ժամգոտած և պատի կախիճի վերածված կարճկոտ թուրը, սրում, փայլեցնում է ու սպասում, թե նորից կշարժվի կոկորդը խցկված թշնամին: Թորոսի վճիռը ինքն իր համար ոչ թե ինքնասպանություն է, այլ՝ դատավճիռ, որ նույնն է՝ թե շարունակվող կռիվ թշնամու դեմ, դրանով իսկ՝ ինքնաազատագրում, ինքնափրկություն: Թորոսի վերջին միտքը հեռակա ուղղված էր իր անունը կրող ծոռանը. «Էղնի ու, ձկուկ, ետ դառնաս իմ եկած ճամփով... Էն ճամփեն, սար ու ձորի մեջ քանց թել խճճված կռիվ ու կոտորումի իմ մոլոր ճամփեն, դու կծկիս ու ետ դառնաս ձկուկ...»(4, էջ 96) : Սա արդեն կտակ է, որին տեր պիտի կանգնել, ինչպես ժառանգած գանձին:

Պատմվածքում Մ. Գալշոյանը հասել է ցավը կոկորդին հասած ժողովրդի ճակատագրի իմաստային և հոգեբանական տպավորիչ պատկերման: Պատմվածքը հիշողության վրեժ է այն ամենի դիմաց, ինչը անհնար է մոռանալ, ինչը արժանապատվության արդար վրեժ է ինքնագոհաբերման հաշվին: Ինչի թիկունքում որպես անդարձ ուրվապատկերներ կանգնում են ավերված գյուղերն ու քաղաքներն, հազարամյա բնակչությունից դադարկված հայրենի երկիրը, կոտորածն ու ավերը, գաղթականների քարավանները, ողբը, սովը, ավերը, արյունը, ժողովրդի բնաջնջումը:

Հայ ժողովրդի կրած տառապանքների ու հերոսամարտ-գոյամարտերի մասին գրվել է ու շատ կգրվի: Այդ գրված ու գրվելիք հայրենապատումի մեջ մնայուն տեղ է վիճակված Մ. Գալշոյանի «Քեռի Թորոսը» պատմվածքին, որովհետև ժողովրդի

տառապանքն ու ցասումը նրա մեջ բարձրացված են գեղարվեստական խտացված խորհրդանշանի աստիճանի, որը դառնում է խտացված գաղափար, խտացված հոգեբանություն, խտացված պատմություն:

Զնայած պարտքի պես կովի իր վրեժն ունի նաև տավորիկցի Դավոն («Դավոն»): Զարմանահրաշ ներաշխարհով Դավոն, որ մեծն Անդրանիկի զինակիցն էր, ձայնեղ մի թուրքի սպանելու պատճառով փաշայի հրամանով վտարվում է զորքից ու մահվան դատապարտվում: Մեռնում է Դավոն, հուշերը նրան տանում-կանգնեցնում են ինքնապաշտպանական կռիվների դիրքերը և «ով որ զարկվեց՝ դավաճան է», այսինքն՝ մեռնելու ժամանակը չէ, կանչը՝ սրտում, վրեժը՝ մտքում՝ նա ավանդում է հոգին. «Ձիու ականջը մտած, մերկացած սուրը ճակատին... Դավոն սուրում էր դեպի արևմուտք, դեպի հեռու լեռների վրա փշրված արևը»(6, էջ 68): Հոգին տալուց առաջ «ձիու ականջը մտած» նույն Դավոն է, նույն ազատամարտիկը, հին վրեժի ցմահ պարտատերը: Դա այդպես է, որովհետև նրա ու նրա սերնդակիցների համար կորստի հետ հաշտվելը ոչ միայն կորուստ է, այլև կորցրած արժանապատվություն ու անարգանք: Եվ վերջին շնչում անգամ նրանք հոգին են տալիս արժանապատիվ մեռնելու համար, որովհետև մտածում են՝ ինչպե՞ս թե, այդ ո՞վ ասաց, որ հայրենի երկիրը պիտի մնա դարավոր ոստիին, այդ դեպքում էլ ինչո՞ւ է ապրել ինքը, իր սերունդը:

Դավոյի օրինակին է հետևում նաև Ծովասարի Օհանը՝ համանուն պատմվածքի հերոսը: Միայն այն տարբերությամբ, որ կյանքի մայրամուտին նա ոչ թե

կռիվ է տալիս դարավոր ոսոխի դեմ, այլ պատրաստություն է տեսնում այցի գնալու իր ծննդավայր՝ Ծովասար: Հոր ու նախնիների ձայնն է կանչում նրան. «Ո՞ր ես գնում, քեռի Օհան», - հարցին նա առանց վարանելու պատասխանում է. «Էրզիր է կերթամ, ախպոր տղա: Իմ օդորմածիկ հերն է կանչե զիս, Ծովասարն է կանչե, կերթամ»(6, էջ 72):

Բոլոր պատմվածքների երկպլան՝ անցյալ-ներկա, հուշ-իրականություն, կորուստ-կարոտ կառուցվածքի մեջ կերպարին ամբողջացնող ուժը դառնում է

հերոսի երեկվա և այսօրվա գործն ու անելիքը միավորող հատկանիշ: Ահա այդ միասնության մեջ են ներկայանում Քեռի Թորոսը, Դավոն, Օհանը, Փողփուչ Մելոն, Թաթոն, մյուս պատմվածքների հերոսները: Եվ ամեն մեկը պատմում է մի պատմություն, պատմում է բոլորին, որ արդեն գիտեն, բայց պատմում են ու վերապրում՝ ամեն անգամ մի մանրամասն լրացնելով, ամեն անգամ մի անուն, մի տեղանուն, մի բույր, մի շրշյուն ավելացնելով, պատմում են, որովհետև այդ պատմությունները նրանց կյանքն են, և այդ պատմություններից դուրս նրանք չկան, դատարկ են լքված տան պես: Ու այսպես խոսում-գրուցում-ապրում-ծերանում և երազներն ու երազանքները կոպերի տակ ծրարած հերթով մեկը մյուսին հավերժական լռության աշխարհն են ճամփա դնում երկրացիները: Թե՛ Թորոսի, թե՛ Դավոյի, թե՛ Օհանի արածները ոչ թե խանգարված զգայախաբության հետևանք է, այլ ամբողջ կյանքի հեևանք է, այլ ամբողջ կյանքի մտասևեռման արդյունք: Սա նրանց կյանքի վերջին մխիթարանքն է:

Եզրակացություն

Այսպիսով, 60-80-ական թթ. արձակում ուրույն տեղ ունեն այն գործերը, որ, օգտագործելով ժողովրդական աշխարհագրագման ու գեղարվեստական արտահայտչաձևերի կենդանի տարրերը, ստեղծեցին ժողովրդի պատմական ճակատագրի մասին պատմող մի շարք խոր ու լիարժեք գրվածքներ: Գրող Մուշեղ Գալշոյանը գալիս էր բնաշխարհիկ արձակից՝ Հովիկ Թումանյան, Մնձուրի, Համաստեղ, Բակունց, Մահարի... Նրա ողջ գրականությունը դարձավ հայրենի եզերքը ոգեկոչող մի կարոտ: Նրա հերոսները շարունակվում են մեկ այլ տարածքում՝ հայրենիքում, բայց ոչ՝ բնօրրանում: Ամեն ինչ կորցրած՝ նրանք ուժ են գտել շարունակվելու: Մա ընդհանրականն է, սակայն ամեն մեկն իրականում ապրում է իր կենսագրությամբ. մի իսկական մարդ-հայրենիք:

Մ. Գալշոյանի ստեղծագործելու տարիներին լայն թափ էր առնում հոգեվերլուծական, փիլիսոփայական, առասպելաբանական արձակը, սակայն Գալշոյանն ընթացավ այլ ճանապարհով, նրա թիկունքում ժողովուրդ ու բնաշխարհ կար՝ իրական մարդիկ, իրական կենսագրություններ, որոնք ամբողջացնում էին հայ մարդու քսաներորդ դարի պատմությունը: Մա ստեղծագործական հաղթանակ էր, որոնումների հանրագումար՝ նյութով ու լեզվով, խոսքի կենդանի ուժով: Պատմվածքները՝ առանց անմիջական կապի, բայց իմաստային ու հոգեբանական անցումներով՝ շարունակում ու լրացնում են իրար՝ կազմելով սերտ միասնություն: Ժամանակները տարրալուծվում են գրքի բոլոր հերոսների մեջ, նաև հեղինակի անձնավորության մեջ, և նա էլ, միանալով իր հերոսների էությանը, գնում է նրանց հոգեկան աշխարհին ընդառաջ:

Օգտագործված գրականություն

1. Գալշոյան Մ., Մարութա սարի ամպերը, Ե., 1981:
2. Գասպարյան Դ., Հայ գրականություն, Ե., 2002: